

ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՍՈՒԹՅԱՆ ՍԵՆՏՈՐԹԻՄ

ՊՐՈՖ. Գ. ԳՈՅԱՆԻ «ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏՐՈՆԸ»
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Հայ թատրոնի, ինչպես և արվեստի մյուս ճյուղերի բազմադարյան պատմության հարցերի մարքսիստական լուսարանումը սովետական արվեստագիտության առջև դրված խնդիրների շարքում գրավում է չափազանց կարևոր տեղի Գորախտարար մինչև այժմ հրապարակի վրա չկա որևէ լուրջ ուսումնասիրություն՝ նվիրված հայկական արվեստի այս կամ այն ճյուղի պատմությանը։ Այս պատճառով էլ նախապատրաստվող աշխատություններն ստանում են առանձնակի կարևոր նշանակություն։ Մյուսից ելնելով է, որ Արվեստների պատմության և տեսության սեկտորը այնքան մեծ ուշադրություն է նվիրել պատմական գիտությունների դոկտոր-պրոֆ. Գ. Գոյանի «Հին Հայաստանի թատրոնը» աշխատության պատրաստմանը՝ նրա ստեղծման բոլոր էտապների ընթացքում։ Սկսած 1945 թվից, տարեկան մի քանի անգամ ընկ. Գոյանի հաղորդումները քննարկված են հրավիրված հատուկ ժողովներում և ցույց է տրված համապատասխան օգնություն հեղինակին։ Նման համագործակցության հետևանքով ստեղծվեց ընկ. Գ. Գոյանի այս աշխատությունը, որը 1949 թվի փետրվարին հեղինակի կողմից պաշտպանվեց որպես դոկտորական դիսերտացիա Լենինգրադի պետական էրմիտաժի գիտական խորհրդում։

Այժմ հեղինակն իր աշխատությունը պատրաստում է տպագրության։ Այս կապակցությամբ անհրաժեշտ էր նորից քննարկել գիրքը, որպեսզի, որքան հնարավոր է, ուղղել գրքում տեղ գտած թերություններն ու սխալները և դրանով իսկ բարձրացնել գրքի տառնային արժեքը։

Ընկ. Դ. Գոյանի «Հին Հայաստանի թատրոնը» աշխատության քննարկումը տեղի ունեցավ ս. թ. մարտի 1-ին և 4-ին Արվեստների պատմության և տեսության սեկտորի գիտական խորհրդի ընդլայնած նիստում, մասնակցությամբ թատերագետների, պատմաբանների, գրականագետների և այլ մասնագիտության աշխատող հեղինակների։ Քննարկման ժամանակ ելույթներ ունեցան ընկ. ընկ. Ռ. Քաչատրյանը, Ս. Օրեմյանը, Ի. Առաքելյանը, Լ. Վալանթարը, Հ. Ղանալանյանը և Ս. Լիսիցյանը։ Նրանք իրենց ելույթներում ընդգծեցին գրքի գիտական արժանիքները և մատնանշեցին նրա մեջ տեղ գտած թերությունները։

Պատմական գիտությունների դոկտոր-պրոֆ. Գ. Գոյանի աշխատության նպատակն է քննադատարար վերլուծել պատմիչների գործերում եղած տեղեկությունները հայ թատրոնի մասին, պեղումների ընթացքում հայտնաբերված նյութական կուլտուրայի մնացորդները, հին ձեռագրերում տեղ գտած մանրանկարները և այլ օժանդակ նյութեր և այդ բոլորի հիման վրա ցույց տալ, որ իրոք հայկական թատրոնն ունի 2000 տարվա պատմություն։

Ընկ. Գոյանին հաջողվել է համոզիչ փաստերով ապացուցել, որ իրոք մեր թվագրությունից առաջ 1-ին դարում (89 թվից) Հայաստանում արդեն գոյություն է ունեցել պրոֆեսիոնալ այնպիսի թատրոն, որն ի վիճակի էր ոչ միայն բեմադրել էվրիպիդեսի և Մեդանդրի կլասիկ տրագեդիաները, այլև տեղական դրամատուրգների, հատկապես Արտավազդի դրած պիեսները։ Այդ նպատակով համապատասխան թատրոններ էին կառուցված ինչպես Տիգրանակերտում, այնպես էլ Արտաշատում, ընդ որում այդ թատրոններն ապահովված էին բարձրորակ արտիստներով, որոնցից մի քանիսը հրավիրված էին Հռոմից, իսկ մնացածը տեղական արտիստներ էին։ Ընկ. Գոյանն իր ուսումնասիրության մեջ առանձնապես շեշտը դնում է հայկական թատրոնի ինքնուրույնության վրա և ձեռքի տակ ունեցած համապատասխան փաստերով ապացուցում այն։

Առանձնապես արժեքավոր է էվրիպիդեսի «Բաբուսուհիներ»-ի բեմադրության վերաբերյալ Պլուտարքոսի հայտնի վկայությանը, որ մեկնաբանությունը, որ տվել է ընկ. Գոյանն իր գրքում։ Մինչև այժմ բազմաթիվ անգամներ մեջ բերված այդ տեքստը բացատրել էին

այնպես, որ «Բաքոսուհիներ»-ի բեմադրության ժամանակ Պենթևսի գլուխը կրասոսի զլիթով փոխարինելը եղել է երջանիկ մի պատահականություն կամ զուգահեռություն: Ընկ. Գոյանին հաջողվել է միանգամայն համոզիչ կերպով ապացուցել, որ այդ կատարվել է վաղօրոք նախապատրաստված կերպով, որպես քաղաքական ղեկման տրագիա՝ ամբարտաժան Հոռմի կրած խոշոր պարտության առթիվ: Արտավազդ 2-րդը, ներկա տերմինով ասած, դիմել է ռեժիսյորական այդ հնարանին՝ ցանկություն ունենալով ավելի մեծ փայլ տալ դաշնակիցների տարած հաղթությանը և պալատական տոնախմբություններին: Նա բեմ է հանել ոչ միայն հոռմեացի պարտված զորավար կրասոսի կտրված գլուխը, այլև ավելացրել է նոր պերսոնաժ—կովի դաշտում կրասոսի գլուխը կտրող Պամակոսֆրին:

Ակադեմիկոս Մառի «խոսքի հնչարանության» մեթոդի օգնությամբ ընկ. Գոյանը նոր բացատրություն է տվել «ձայնարկու գուսան», «կատակագուսան», «գուսան-միմոսներ», «հացկատակ», «խեղկատակ» և այլն տերմինների, որոնք կարևոր նշանակություն ունեն հայկական թատրոնի ակունքները պարզելու տեսակետից:

Ընկ. Գոյանին հաջողվել է նմանապես նոր տեսանկյունից բացատրել պեղումների ընթացքում հայտնաբերված նյութական կուլտուրայի մնացորդների, հատկապես Բակուր 2-րդի դավաթի, Բեսսոնովի բրոնզի արձանիկների և այլ հուշարձանների հետ կապված հարցերը, ինչպես նաև հին ձեռագրերում պահպանված մանրանկարները՝ ամենուրեք զանելով «համապատասխան ապացույցներ» հայ թատրոնի ակունքների պարզաբանման և հետագա անընդհատ գոյության ապացուցման համար:

Նշված այս և բազմաթիվ այլ արժանիքներ մատնացույց են արված ինչպես զոկտորական ղիսերտացիայի պաշտպանության ընթացքում հանդես եկած պաշտոնական օպոնենտներ, Հայկական ՍՍՄ Գիտ. Ակադեմիայի իսկական անդամ ակադեմիկոս Ն. Ա. Օրբելու, թղթակից անդամներ Ա. Կ. Զիվելեդովի, Կ. Վ. Տրեվերի և ակադեմիկոս Ն. Ի. Տոլստոյի ելույթներում, այնպես էլ Արվեստների պատմության և տեսության սեկտորի պաշտոնական ռեգենդներ պրոֆ. Լ. Ա. Քալանթարի, պատմական գիտությունների թեկնածու Ս. Տ. Երեմյանի, ֆիլոլոգիական գիտությունների զոկտոր-պրոֆ. Հ. Ճ. Ղանալանյանի և սեկտորի ավագ գիտաշխատակից Լ. Ա. Դուռնովայի գրավոր ռեգենդներում:

Սակայն, ընկ. Գոյանի գրքում տեղ են գտել զգալի քանակությամբ լուրջ սխալներ ու թերություններ, որոնք վրիպել են ինչպես օպոնենտների, այնպես էլ ռեգենդիստների աչքից: Այդ հանգամանքը բացահայտ կերպով ապացուցվեց զրբի քննարկման ընթացքում, հատկապես ընկ. Ռ. Քաչատրյանի ելույթում:

Որոնք են այդ հիմնական թերությունները, որոնք տեղ են գտել գրքում և որոնց վրա դարձվեց հեղինակի ուղղորդությունը գրքի քննարկման ընթացքում:

Գրքում թույլ է գծված Հայաստանի պատմական այն իրադրությունը, որի մեջ աեղի է ունեցել հայկական կուլտուրայի, հատկապես թատրոնի զարգացումը: Հեղինակը չի կարողացել խորանալ պատմական իրադարձությունների մեջ և հաճախ հենվել է այնպիսի մասնադեպերի կարծիքների վրա, որոնք լինելով բուրժուական պատմագրության ներկայացուցիչներ, պատմական իրադարձությունները լուսարանել են սխալ ու անընդունելի կերպով: Առանձնապես ներքին չէ սովետական արվեստագետին երկար ցիտատներ բերել (հաճախ էլ աղբյուրը ցույց չտալով) այնպիսի մի պատմաբանից, ինչպիսին Ամֆիտեալը է, որը Հայաստանի վրա նայել է որպես երկու հզոր տերությունների՝ Հոռմի և Սասանյան Պարսկաստանի միջև ընկած մի DOBESKA-ի: Դժբախտաբար ընկ. Գոյանը հենց այդ տողերն էլ բերել է իր աշխատության մեջ: Այնինչ, Հայաստանի այդ շրջանի պատմության հարցերը մշակված են սովետական աչքի բնկնող պատմաբանների կողմից: Անհրաժեշտ էր հիմնվել ոչ թե Ամֆիտեալի սխալ տեսակետների, այլ սովետական պատմագիտության վերջին խոսքի վրա:

Ընկ. Գոյանը Տիգրան 2-րդին բնորոշել է միայն որպես նվաճողական քաղաքականություն վարող թագավոր: Այնինչ նման բնորոշումը ճիշտ չէ և անտեսում է այն պայթյալը, որ Տիգրան 2-րդը մղել է հոռմեական էքսպանսիայի դեմ: Հետևապես անհրաժեշտ է հրաժարվել հնացած տեսակետից և հարցը շարադրել նոր լույսի տակ:

Ընկ. Գոյանի աշխատության առաջին հատորի անվանաթերթի վրա նշված է այն ժամանակաշրջանը (1-ին դար մեր թվագրությունից առաջ - 4-րդ դար մեր թվ.), որի սահմաններում պետք է ամփոփվեր հեղինակն իր ուսումնասիրության ընթացքում: Սակայն հեղինակը հաճախ խախտում է ժամանակադրական այդ շրջանակը և ավելորդ էքսկուրսներ է կատարում ինչպես ավելի վաղ շրջանները, այնպես էլ մեր թվագրության 4-րդ դար-

րից հետո, երբեմն հասնելով մինչև 18—19-րդ դարերը: Անվանաթերթին նայելով, ընթերցողի համար անհասկանալի են դառնում նման խախտումները:

Գրքում տեղ են գտել բազմաթիվ մանրուքներ, կոդիցալի հարցերի մանրամասն էքսկուրսներ, որոնք անմիջականորեն չեն առնչվում հետազոտվող հարցերի հետ և այդ մանրամասնությունների մեջ կորչում է հիմնականը: Օրինակ, հեղինակը ամենայն մանրամասնությամբ վերապատմել է բեսսոնովյան արձանիկների հայտնադործման պատմությունը, տվել է բրոնզի բազադրության վերլուծությունը և նման այլ խնդիրներ՝ յուրաքանչյուրին հատկացնելով տասնյակ էջեր: Հեղինակը պետք է վերանայի գիրքը, մաքրի այն ավելորդ մանրամասնություններից և կոդիցալի էքսկուրսներից՝ ընթերցողի ուշադրությունը բեռնելով հետազոտվող հիմնական հարցերի վրա:

Հեղինակը, հասկանալի չէ թե ինչու, իր պաշտպանության տակ է վերցրել բանաստեղծ Սողոմոն Տառնցու նացիոնալիստական սխալներ պարունակող լատաստեղծությունները, որոնք իր ժամանակին դատապարտված են Հի(ր)Պ Կենտկոմի կողմից:

Խոսելով հոմեոկան այն լեգեոնների մասին, որոնք եկել էին Հայաստանը հրով ու սրով նվաճելու համար, հեղինակը, հակասելով իր գրքի հիմնական թեզին, ենթադրում է, որ այդ լեգեոնների հետ միասին Հայաստան են եկել հոմեոկան թատերախմբերը: Եվ հայերն էլ նրանց հետևելով է, որ ստեղծել են թատերախմբեր: Դուրս է գալիս, որ թատրոնը դրսից է ներմուծված Հայաստան և, որն ավելի վրդովեցուցիչ է, այդ թատրոնը ներմուծողները եղել են հոմեոկան լեգեոնները: Այս ենթադրությունը բոլորովին հիմք չունի, մանավանդ որ այդ շրջանի պատմիչների գործերում էլ ոչ մի հիշատակություն չկա այդ մասին:

Հեղինակն իր գրքում աշխատել է ապացուցել հայկական թատրոնի ինքնուրույնությունը և հերքել դրսից ներմուծված լինելու վերաբերյալ տեսակետները: Գրքում տեղ են գտել մի շարք անհաջող բանաձևումներ, որոնք հակադրվում են այդ հիմնական մտքին և կասկածի տակ վերցնում այն: Հաճախ հեղինակը միայն խոսքերով է շեշտում հայկական թատրոնի ինքնուրույնությունը: Այդպիսի դեպքերում նրա խոսքերը հնչում են անհամոզիչ: Ահա այս նկատի ունենալով հեղինակը պետք է վերանայի համապատասխան տեղերը, վերացնի անհաջող բանաձևումներն ու հակասությունները և հետևողականորեն անցկացնի իր հիմնական թեզը:

Հեղինակն այն միտքն է արտահայտել, թե հայ ժողովուրդիները պալատն ամեն ինչում կուրորեն ընդօրինակել է Սելևկյանների արքունիքին և որ թատրոնի կառուցումը նույնպես հետևանք է այդպիսի ընդօրինակման: Հեղինակի այս թեզը միանգամայն հակասում է հայ թատրոնի ինքնուրույնության վերաբերյալ թեզին: Բացի այդ, հեղինակը Սելևկյաններին համարում է սյուդերին, իսկ ժողովուրդիներին՝ վառալ, այնինչ ևրդական երկրների ֆեոդալական այդպիսի վասալիտետը բնորոշ չէր այդ ժամանակաշրջանի Հայաստանի համար: Հետևապես անտեղի է նման համեմատությունը:

Խոսելով անտիկ ամֆիթատրոնի չափերի մասին, հեղինակը Տիգրանակերտի ամֆիթատրոնը համեմատել է Փոքր Ասիայի (հատկապես Պերգամի և Պրիենի) ամֆիթատրոնների ձավալի հետ և աշխատել է գտնել միջին թվարանականը: Սա ճիշտ չէ: Ահհրաժեշտ է դիմել այլ միջոցների և, եթե այդ հնարավոր է, վերականգնել Տիգրանակերտի ամֆիթատրոնի մեծությունը: Չէ՞ որ նման համեմատությունը դարձյալ ընթերցողին կարող է մոլորություն մեջ գցել և շեղել հայկական թատրոնի ինքնուրույնության հիմնական թեզից:

Ճիշտ չէ նաև Պենթևսի ու Կրասոսի վերաբերյալ բանաձևումը, որի համաձայն դուրս է գալիս, որ նրանք ոչ թե նախահարձակ են եղել, այլ ընդդիմացել են Ասիայի տերերին: Այնինչ պատմական իրողությունը հակառակն է: Կրասոսը, որպես Հռոմի զորավար, հարձակվել էր Ասիայի տերերի (այս դեպքում Սասանյանների) վրա և ձգտում էր նրանց երկրի գրավմանն ու թալանմանը:

Խոսելով հին աշխարհի ստրկատիրական երկրներում եղած դասակարգային պայքարի ընդհանրության մասին, հեղինակը մոռացության է մատնել այն, որ սկզբունքորեն իրար նման լինելով հանդերձ, այդ պայքարը տարբեր երկրներում տարբեր զոհերով է ընթացել: Այս հանգամանքը չի կարելի աչքաթող անել:

Ահա հիմնական այն թերություններն ու սխալները, որոնց մասին խոսվեց քննարկման ընթացքում հանդես եկած ընկերների ելույթներում: Ընդ որում պետք է նշել, որ ոչ բոլոր ելույթներն էին բոլորակալ քննադատությամբ հագեցված: Եթե ընկ. Ռ. Խաչատրյանն ամենայն սրությամբ բացահայտեց վերը նշված սխալներն ու թերությունները,

նույնը չի կարելի ասել պաշտոնական ռեցենզենտների, հատկապես պրոֆեսոր Ն. Քալանթարի ելույթի մասին: Փոխանակ սրելու հարցերը և այդպիսով օգուտ տալու գործին, նա աշխատում է սվադել բացերը: Նույնիսկ այն դեպքերում, երբ գրքի հեղինակը համաձայնում էր ելույթ ունեցողների հետ, ռեցենզենտները շարունակում էին մնալ նախկին գիրքերի վրա:

Մաքերի փոխանակությունից հետո ելույթ ունենալով պրոֆ. Գ. Գոյանը մեկ անգամ թվեց բոլոր այն հարցերը, որոնց վերաբերյալ արված դիտողություններին ինքը միանգամայն համաձայն է: Նա ընդունեց, որ իրոք իր գրքում տեղ են գտել վերը նշված բացերն ու թերությունները և խոստացավ գիրքը տպագրելուց առաջ մտցնել անհրաժեշտ բոլոր ուղղումները:

Արվեստների պատմության և տեսության սեկտորի գիտական խորհուրդը անհրաժեշտ գտավ հանձնարարել հեղինակին լրջորեն վերանայել գիրքը, մտցնել համապատասխան ուղղումները և գործը կազմակերպել այնպես, որպեսզի այն լույս տեսնի Հայաստանում սովետական կարգերի հաստատման 30-ամյակի նախօրյակին:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

